

h.455963

05-12-2021թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Գեղարքունիքի մարզպետարան*

Դիմող՝ *ԼՈՒՍԻՆԵ ԻՎԱՆՈՎ-ԴԱՎԹՅԱՆ*

ՀՀ քաղաքացի

Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0054, ԴԱՎԹԱՇԵՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 1 ԹՂՄ.,
13, 48,*

davtyanlusineh@gmail.com : +37498209090

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պրն/տիկին,

Բարև Ձեզ: Ես Լուսինեն եմ PhD ուսանող CERGE-EI-ից (աշխարհի լավագույն 5% հետազոտական համալսարանների ցանկում է ըստ RepEc-ի): Հետազոտական աշխատանքս կոնֆլիկտի տնտեսագիտության ոլորտից է: Նպատակն է ուսումնասիրել պատերազմի ազդեցությունը կրթության ոլորտի վրա, մասնավորապես աշակերտների, ուսանողների առաջադիմության վրա:

Հետազոտությունը պետք է կատարվի համայնքների մակարդակով (ընտրական տեղամասերի): Դրա համար ինձ հարկավոր են տվյալներ 2020 թվականի Արցախյան պատերազմի զոհերի վերաբերյալ. մասնավորապես, թե որտեղ են բնակվել/գրանցված եղել: Նախնական տվյալները ձեռք էի բերել ընտրողների ռեգիստրից (ԱՎՀ ԵԼ ծննդյան տարեթվի միջոցով), բայց քանի որ խոսքը գնում է զոհվածների տվյալների մասին, գերակշիռ մասը արդեն ջնջվել է ռեգիստրից: Ես ներբեռնել եմ զոհվածների ընտանիքներին եւ վիրավորներին օգնության չափի և տրամադրման վերաբերյալ տվյալները, որը, ցավոք, չի պարունակում որեւէ տեղեկություն նրանց բնակության հետ կապված: Արդյո՞ք կարող եմ ձեռք բերել նման տվյալներ մարզպետարանից (տվյալ մարզի պատերազմի զոհերի վերաբերյալ): Հասցեները կարող են լինել ոչ ճշգրիտ, այլ մոտավոր (օրինակ համայնքը եւ փողոցը կամ ըստ ՏԸՀ):

Աշխատանքն իրականացնելու համար մյուս տվյալները հասանելի են եւ ձեռք են բերվել. դպրոցների վերաբերյալ տվյալները ձեռքեն բերվել ԿՏԱԿ-ից, իսկ զոհերի անունները ՊՆ-ի հայտարարություններից: Հոդվածը գրվելու է անգլերենով: Նպատակն է տպագրվել աշխարհի թոփ 6-րդ գիտական ամսագրում (Journal of the European Economic Association): Բացի գիտական ներդրումից, հոդվածի նպատակն է ևս մեկ անգամ խոսել Արցախյան պատերազմից ու նրա ազդեցությունից:

Հետագայում, նույն տվյալներով կհետազոտեմ կոնֆլիկտի ինտենսիվության (զոհերիքանակը ըստ ՏԸՀ) ազդեցությունը ընտրողների քաղաքական նախապատվությունների վրա 2021 արտահերթ ընտրությունների շրջանակներում, կվերլուծեմ ընտրողների վարքագիծը: Անհրաժեշտության դեպքում կարող եմ ուղարկել հետազոտության արտոնագիր: Նշված տեղեկատվությունը շատ կարեւոր է իմ հետազոտության համար, սիրով կսպասեմ Ձեր պատասխանին:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԼՈՒՄԻՆԵ ԻՎԱՆՈՎ-ԴԱՎԹՅԱՆ